Այս եղանակների գլխում նշանակուած են Ութն ձայն եղանակները, որոնք առանձին հիմք են կազմում մնացած մանրեղանակների։

Այդ Ութն ձայնն էլ ձայնագրուած է հին խազերով, ուրեմն և կազմում են առանձին եղանակ։ Չենք կարող պնդել, որ դոքա նոյն իսկ Շարականի եղանակները լինին, քանի որ խազերի նշանակութեան թափանցելը դեռ անհնար է. ուրեմն և սոքա պէտք է մտնեն այն ընդհանուր գումարի թուում, իբրև զատ եղանակներ, որ կունենանք 152+8=160։

Եթէ Հայոց բոլոր հոգևոր եղանակները միմեանց հետ գումարենք, ուրեմն և Շարականներինը կլինի 160+40=200։

Շարականի եղանակները քառասուն են, բայց քսանը մնացածից ձևափոխուած կամ նոցա նման լինելով, իբրև զատ եղանակ միմեանցից զանազան, միայն քսանն է. այս գումարելով հոգևոր երգերի տեսակների հաւանական գումարի հետ 120-ի, վերջնական գումարը կլինի 140 կամ 150։

Այս թիւը մեզ չպէտք է զարմացնէ, մենք արևելեան ազգ գոլով, մեր եղանակներն էլ արևելեան բազմաձիւղ եղանակներից են և մեծ առընչութիւն ունին։

Այս առթիւ մի այլ անգամ։

ՍՈՂՈՄՈՆ Ա. Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 997 յանուն Տիկին Եկատերինէ Մելիք Շահնազարեան Դէշափուրի ի Դարբանդ, որով օրհնէ զնա սակս նուիրելոյն ի յիշատակ առն իւրոյ հանդուցելոյ 2000 բուբլիս, ի նպաստ վերանորոգութեան Ս. Էջմիածնի և Գէորգեան Ճեմարանի։ 25 յունիսի.

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1009 յանուն Յովսէփ քահանայի Ամիրաղեան՝ որ ի Քութայիս, որով շնորհէ նմա իրաւունս կրելոյ ոսկեզօծ խաչ, ըստ խնդրանաց ժողովրդեանն։ 2 յուլիսի.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1017 յանուն Յովհաննէս աւագ քահանայի Հիւնքեար Պէյլենեան՝ որ ի Կ. Պոլիս, որով օրհնէ զնա և դրուատէ զպէսպէս երկասիրութիւնս նորա, որոց վերջինն է «Ստուգաբանական բառարան Հայ լեզուի», պսակեալն Սահակ—Մեսրոպեան մրցանակաւ։ 4 յուլիսի.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1023 յանուն Մինաս քահանայի Միրանեան՝ որ ի Վլատիկաւկազ, որով շնորհէ նմա կրել «կամիլաւկա» անուանեալ գլխարկն, ըստ խնդրանաց ժողովրդեանն։ 4 յուլիսի.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1024 յանուն Արսէն քահանայի Մանդակունւոյ՝ որ ի Թէոդոսիա, որով շնորհէ նմա իրաւունս կրելոյ խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան նախորդ կառավարչի թեմին Բեսարաբիոյ։ 4 յուլիսի.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1059 յանուն առաջնորդի Ցփխեաց Գէորգ եպիսկոպոսի, որով պատուիրէ պահանջել ի գործակալէն Ախալքալակայ ստոյգ տեղեկութիւնս և կոչելով զքահանայս գիւղօրէիցն նոյն գործակալութեան յանդիմանել, պատժել զի մի՝ համարձակեսցին յայսմհետէ թողուլ զնորածինս առանց մկրտութեան, զկիւանդս առանց հաղորդութեան և զննջեցեալս առանց թաղման, յառաջագոյն պահանջելով վարձ մեծագին։ 6 յուլիսի.

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1060 յանուն որդւոց հանգուցեալ Գ. Թումայեանի, որով մխիթարէ զնոսա ընդ դառն կորուստ հօր իւրեանց և մաղթէ կեալ առա-

քինութեամբ, զնմանութիւն հոր բերելով յաղթօղուտ գործս։ 6 յուլիսի։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1074 յանուն բարեգործական ընկերութեան Հայոց Փարիզու, որով օրհնէ զնորակազմ ընկերութիւնն՝ զոր ըստ ցանկութեան անդամոց համարի ընդ հայրապետական իրաւամբ և պատուիրէ ջան ի գործ արկանել արդիւնաւորման և յառաջադիմութեան։ 19 յուլիսի։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1124 յանուն Սարգիս քահանայի Թաթոսիզեան՝ անդամոյ Կոնսիստորիային Բեսարաբիոյ, որով շնորհէ նմա իրաւունս կրելոյ խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան նախորդ կառավարչի թեմին։ 23 յուլիսի։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1134 յանուն Եսայի եպիսկոպոսի՝ Առաջնորդին Պարսկաստանի և Հնդկաստանի, որով շնորհէ նմա զԱրքեպիսկոպոսութեան պատիւ։ 26 յուլիսի։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1135 յանուն Ժողովրդեան Հայոց Թեհրանայ, որով ծանուցանէ զկարգումն Սահակ Ծ. վարդապետի Այվատեան ի փոխանորդութիւն Առաջնորդութեան, ի բացակայութեան Գեր. Եսայի Արքեպիսկոպոսի։ 26 յուլիսի։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1167 յանուն վանահօր Ս. Թովմայի Առաքելոյն որ յԱգուլիս՝ Գրիգոր եպիսկոպոսի Ազափիրեան, որով յայտնէ նմա զգոհունակութիւն Իւր՝ սակս նուիրելոյն 1000 ռուբլիս ի նպաստ վերանորոգութեան վանուցն Ս. Գայիանէի։ 26 յուլիսի։

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1180 յանուն Սուքիաս վարդապետի Պարոնեան՝ հովուի Հայոց Անդլիոյ, որով շնորհէ նմա լանջախաչ վարդապետական ի նշան գոհունակութեան։ 27 յուլիսի։

Ազգիս Վեհափառ Հայրապետը բարեհաճեց նշանակել Պարոն Կարապետ Կոստանեանցին՝ Տեսուչ Ճեմարանի հետևեալ Հայրապետական Կոնդակաւ.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՐՏԻԶԱՒՔ ՀԱՄԱՐԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՒՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐՈՒՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

Մեծարոյ Պ. Կարապետի Կոստանեան, պաշտօնական տեսչի Ներսիսեան հոգևոր դպրանոցի ի Տփխիս, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս ողջոյն և օհնութիւն Հայրապետական։

Պաշտօն տեսչութեան Գէորգեան հոգևոր ճեմարանի Մայր Աթոռոյս թափուր գոլով և ունելով Մեր ի նկատի զանցեալ և զայժմու գործունէութիւն Ձեր յասպարիզի դաստիարակութեան մանկանց՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Մերով կարգեմք զՁեզ տեսուչ Հոգևոր ճեմարանի Մայր Աթոռոյս, պատուիրելով Ձեզ աւարտել զգործս Ձեր ի Դպրանոցին և փութալ ընդունել զհաշիւս և զայլ գոյս ճեմարանին՝ յորոց պատուիրեալ էաք ընդունել ի նախկին տեսչէ Գեր. Սարգիս եպիսկոպոսէ և սահմանել զպաշտօն տեսչութեանն։

Եւ մինչ ցհաստատութիւն նորոյ լիակատար կանոնադրութեան վասն ճեմարանին՝ ընդ այսմ Կոնդակի յանձնեմք Ձեզ զկանոնադրութիւնն, որ ցայժմ ի կիրառութեան է, և պատուիրեմք Ձեզ վարել զպաշտօնդ ըստ ամենայնի համեմատ տրամադրութեանց նորին և հրահանգաց Մերոց, զորս ի դէպ ժամու և ըստ պահանջից հարկին տացուք Մեք։ Վստահիմք, եթէ Դուք կարող լիցիք արդիւնաւորել զպաշտօնդ՝ կառավարելով և առաջնորդելով աշակերտելոցն ի բուն նպատակ ճեմարանին՝ ի լնուլ զպէտս կարեաց Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայց, տալով նմին զարժանաւոր

պաշտօնեայս և սիրելի Ազգիս Մերում զրաՆիրուն ուսուցիչս։

Պարտ է Ձեզ փոյթ մեծ ունել և խնամով առնել զընտրութիւն պաշտօնէից ճեմարանին, և-ս և աշակերտաց թէ ի հնոցն և թէ յորոց ցանկասցեն ի նորոյ մտանել, այնպէս զի ամենեքին նոքա համակերպեալ իցեն ըստ ամենայնի վսեմ կոչման Գէորգեան Հոգևոր ճեմարանիս։

Զայսպիսի պարտիս գնելով Մեր ի վերայ Ձեր՝ զՁեզ ունիմք համաձայն կանոնադրութեանն ճանաչել պատասխանատու առաջի Մեր վասն բարեկարգութեան և յառաջադիմութեան ճեմարանին ըստ ամենայն մասանց, ըստ այսմ և ամենայն պաշտօնեայք ճեմարանին զոլով ըստ կանոնադրութեանն ստորադասեալ Ձեզ՝ զտանին պատասխանատու առաջի Ձեր։ Իսկ յորոշեալն զթիւ աշակերտաց՝ ունիցես ի նկատի որպէս զառողջապահական հանգամանս և զյարմարութիւնս շինուածոց ճեմարանին նոյնպէս և զնախահաշիւ ծախուց նորին։

Եւ Մեք աղօթս առնեմք, զի շնորհաց Հոգին Սուրբ օժանդակ լիցի Ձեզ և յաջողեսցէ ի ծանր պաշտամանդ այդմիկ։

Ողջ լերուք ի Տէր։

Ի 21 Յուլիսի 1894 (Սոսրաֆիրեան)

Եւ ըստ տոմարիս Ռ.ՅԵԳ ՄԿՐՏԻՉ ԿԷԹՈՒՂԻԿՈՍ

Համար 1095 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Յայրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ի Վաղարշապատ։

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Յուլիս 6։ Աստրախանի Հայոց կոնսիստորեայն ապրիլի 13-ին յայտնեց թէ՝ Սերովբէ աւագ քահանայ Լազարեանց Արմաւիրի մօտ ընկնելով երկաթուղու տակ, վախճանուել է. և այժմ նորա անչափահաս երեք զաւակը Իւրեանց մօր հետ գտնուումեն Ս. Պետերբուրգ. Սինօդն պատուիրեց նոյն կոնսիստորիային տալ հանգուցեալ Սերովբէ քահանայի երիցուհուն և նորա զաւակներին տարեկան 60 բուրլի թեմին հոգևորականաց որրոց և այրեաց Գանձարանից և 140 ր. եկեղեցիներից ընդ ամենը 200 ր. ի սնունդ նոցա։

—

Յուլիս 6։ Երևանի Կոնսիստորիայի միջնորդութեան համեմատ Սինօդը պատուիրեց Արթիկցի Ռուբէն քահանայ Տէր Գրիգորեանը փոխադրել Կարս քաղաք հանգուցեալ Սարգիս քահանայ Բզնունու տեղը ժողովուրդը հովուելու։

—

Յուլիս 13։ Արքազնագոյն Հայրապետի բանաւոր պատուէրի համեմատ Սինօդը վկայական տուեց Մայր Աթոռի Միաբան Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանին Պարիզ գնալու համար։

—

Յուլիս 18։ Սինօդը թոյլ տուեց Կարսի Հոգևոր կառավարութեանը շինել եկեղեցի Կաղզուան գաւառի Բաղրան գիւղում։

—

Յուլիս 18։ Սինօդը Բարձրագոյն թոյլտուութիւն ստանալուց յետոյ՝ պատուիրեց Տփխիսի Հայոց Կոնսիստորիային ընդունել Լիանոզեանց եղբարց Գէորգի և Ստեփանոսի նուիրած տունը, որ արժէ 10,000 բուրլի և հաստատել կալուածագիրը Սղնախ քաղաքի Ս. Կարապետ եկեղեցւոյ անունով։

—

Յուլիս 18։ Սինօդը պատուիրեց Տփխիսի Կոնսիստորիային ընդունել Գէորգ քահանայ Դալստեանցի ընծայած տունը, որ արժէ 300 բուրլի և հաստատել կալուածագիրը վանաց աւագ եկեղեցւոյ անունով։

—

Յուլիս 18։ Սինօդը մերժեց Աստրախանի Կոնսիստորիայի միջնորդութիւնը Ս. Խաչ քաղաքի Գէորգ քահանայ Տէր Մելքիսեդեկեանցին, Արմաւիրցի Գալուստ աւագ քահանայ Դաւթեանցին և Ղզլարեցի Գրիգոր քահանայ Իւղբաշեանցին տաք ջրեր գնալու համար ի դիւա առողջութեան, որովհետև այն քահանաների հիւանդութեան համար չէին մատուցուած օրինաւոր վկայականներ։

—